46. ՓԸՌԹՈՒՇԸ

Էրկու ախպեր ըն ինըմ։ Ըտրանք հոնձա՛ կյամ ըն մին շոք, կանանչ ծառի տակե նըստըմ, վեր փըռթուշ օտին։ Մըեծ քըթուլնեն քաշըմ ըն, յրա պըրծընըմ, վեր օտի՞ն։ Ամմա պիծի ախպերը խորամանգյ ա ինըմ. մըթկըմը օգըմ ա մին պաճճառ քըթենա, վեր ինքյը շատ օտի էտ կյեվաթը լիքյը փուռթուշան։

Քըթուլը քաշ ա տինըմ, մըեծ ախպորը ասըմ. — Ա՛յ Պետի, մեր հա՛ր հո՞ւնց մըեռավ։

Պետին քթուլը քաշ ա տինըմ, համավ, հոտավ, ղարարաղցուն ըգյուրա՛ նաղլ անըմ։

Միչև նաղլ ա անըմ, պըրծընըմ, տըեսնըմ ա փըռթուշին կյեվաթը տերտակ։ Սուա ա անըմ, եր կենըմ, քյինըմ հոնձ։

Մին օր էլ քյըսօրին, հոնձան ետ տըեռած, փուռթուշ օտելիս էլհա կուծի ախպերը օգըմ ա խա՛փի մըեծ ախպորը, ինքյը շատ օտե։ Ասըմ ա.— Ա՛ Պետ, էն օրը լա՛վ չի ըսկացե, ապան հո՞ւնց ա մըեռալ։

Մեծ ախպերըն ասըմ ա.— Հո՞ւնց ա մըեռա՞լ, փո՛ւհ ա ըրալ, մըեռալ, փու՛հ, ետնան էն փա՛ղի մեծ քըթուլներան մինը քըշիլավ յրա յա պըրծընըմ փըռթուշին։